ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ. Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.). ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000, 240 էջ:

Հայ ժողովրդի պատմությունն անկարելի է պատկերացնել առանց աշխարհով մեկ սփռված գաղթօջախների պատմության:

Դաժան ճակատագրի հարկադրանքով, հայության զգալի հատվածներ հեռացել են հայրենի եզերքից և գաղթել աշխարհի տարբեր ցամաքամասեր հիմնելով մեծ ու փոքր գաղթավայրեր, որոնք ժամանակի ընթացքում կամ բարգավաճել ու հզորացել են կամ անհետացել: Անչափ բնորոշ է մեծն Լեոյի հետևյալ դիտարկումը. «Հայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է, որ նա կազմվում է հայ գաղութների հզոր ազդեցության տակ»:

Հայկական Սփյուռքի ամենից մեծաթիվ օջախը ԱՄՆ-ի գաղութն է, որի սկզբնավորման ու զարգացման պատմությանն է նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ ու շնորհալի գիտաշխատող, պատմագիտության թեկնածու Քնարիկ Ավագյանի «Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.)» ուշագրավ աշխատությունը, որը 2000 թ. լույս է ընծայել «Գիտություն» հրատարակչությունը (խմբագիր ակադեմիկոս Վարգաս Միքայելյան): Աշխատանքը կարևորվում է նաև նրանով, որ մինչև օրս բացակայում էր ԱՄՆ-ի հայ գաղութի պատմությանը նվիրված ամբողջական մի ուսումնասիրություն:

Հեղինակի հիմնական նպատակն է եղել հանգամանալից ու բազմակողմանի ներկայացնել ԱՄՆ-ի հայ գաղութի պատմության ստվար մի ժամանակահատվածի համալիր պատկերը՝ սկսած 1618 թ. Նոր երկիր Ջոն Մարտին Հայի ոտնագրումից մինչև 1924 թվականը: Հեղինակի ուշադրության առանցքում են եղել հետևյալ հիմնահարցերը. հայերի հոսքը դեպի ԱՄՆ, տեղաբաշխումը, զբաղմունքները, ամերիկահայերի կենսամակարդակը, ամերիկահայ ընտանիքը, կենցաղն ու բարքերը, ամերիկահայ հասարակական-քաղաքական կազմակերպությունները, ընկերություններն ու ակումբները, ամերիկահայերի կապը բնօրրանի հետ, եկեղեցին, պարբերական մամուլն ու տպարանները, կրթական-մասնագիտական զարգացումը, գրականությունը, դերասանական արվեստը, երգարվեստն ու գեղարվեստը և այլն:

Աշխատության համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել այն փաստաթղթերը, որոնք լույս են տեսել անգլերեն լեզվով հրատարակություններում, ինչպես նաև արտասահմանում և հայրենիքում լույս տեսած մի շարք վավերագրական, հրապարակախոսական, հուշագրական բնույթի աշխատությունները, ՀՀ պատմության պետական կենտրոնական արխիվից քաղված բացառիկ արժեք ներկայացնող փաստաթղթերը, ինչպես նաև Թուրքիո Հայոց պատրիարքարանի դիվանի հույժ կարևոր նյութերը:

Հեղինակը նշում է, որ Ջոն Մարտինից հետո 1653 թ. Ամերիկա են գաղթում երկու շերամաբույծ հայեր՝ վերականգնելու շերամաբուծությունը և մետաքսագործությունը Վիրջինիա նահանգում, ինչպես նաև իրենց հմտությունները տեղաբնիկներին հաղորդելու նպատակով: Շուտով շերամապահական գործն այնքան հաջող ընթացք է ստանում, որ Վիրջինիայի ղեկավար Էդ. Դիդգեսը պարգևատրում է հայերին և նույնիսկ երկարաչունչ մի ներբող է հյուսում նրանց պատվին:

Աշխատությունից պարզ է դառնում, որ XIX դարում Արևմտահայաստանից հայերի արտագաղթը դեպի ԱՄՆ սկզբնավորվել է ամերիկյան բողոքական քարոզիչների ծավալած ջանքերի շնորհիվ: Միսիոներների քարոզչությունը չէր կարող անտարբեր

թողնել հոգևոր արթնացում ապրող հայ երիտասարդությանը, որը, հաճախելով ամերիկյան գպրոցներ ու կոլեջներ, հետզհետե իր հայացքը հառել էր օվկիանոսից այն կողմ գտնվող և ազատության խորհրդանիշը հանդիսացող երկրին: Այս էտապում հայերն ԱՄՆ են մեկնել նաև որպես բողոքական քարոզիչների սպասավորներ: Նրանցից էր, օրինակ, 1841 թ. քարոզիչ Հ. Դուայթի սպասավոր Թագևոսյանը, որը հետագայում սկսել է զբաղվել ռահաթ լոխումի արտադրությամբ, այն Նորովի կոչելով «թզի հալվա»:

Մեջբերված հետաքրքիր փաստերից է նաև քիմիայի, բժշկության, դեղագործության ոլորտի մասնագետ Քրիստափոր Տեր-Սերոբյանի վերաբերյալ տեղեկությունը, քանի որ նա հանդիսացել է ամերիկահայ առաջին գյուտարարը և կարևոր ծառայություն մատուցել ամերիկյան պետությանը հայտնագործելով երկրի թղթադրամի (դոլար) դրամանենգման չենթարկվող և մինչև օրս գործածվող յուրահատուկ սև և կանաչ ներկերը: Ք. Տեր-Սերոբյանի գյուտը ամերիկյան կառավարության կողմից գնահատվել է որպես «Աստվածային պարգև», քանի որ այն վերջ տվեց խոշոր չափերի հասած դրամանենգությանը:

Ամերիկա մուտք գործած առաջին հայերից է նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության հայր Ղևոնդ Ալիշանի եղբայրը՝ Սերոբ Ալիշանը: Ի դեպ, եղբոր կատարած ճամփորդության առիթով Ղ. Ալիշանը երկարաշունչ մի բանաստեղծություն է ձոնել նրան:

Հեղինակը, վերլուծելով դեպի ԱՄՆ հայերի գաղթի խորքային պատճառները, նշում է, որ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով արևմտահայության հանդեպ սկսված բացահայտ հալածանքներն ու տնտեսական կյանքի անկումը մեծապես խթանել է հայերի հետագա արտահոսքը՝ ընդգրկելով ոչ միայն ուսանողներին, արհեստավորներին և վաճառականներին, այլև ծանր հարկերի տակ կքած գյուղացիներին ու ունեզրկված գործավորներին: Պանդուխտների մեծ մասը, մտադրություն չունենալով հաստատվել Նոր երկրում, ձգտել է որոշ գումար վաստակելուց հետո վերադառնալ հայրենի վայրեր: Սակայն ԱՄՆ-ում նրանց համար բացված աշխատանքային գրավիչ պայմանները, երբ մեկ օրում վաստակում էին այնքան, որքան Օսմանյան կայսրությունում՝ մեկ տարում, պատճառ են հանդիսացել, որպեսզի շատ շատերն ընդմիշտ հաստատվեն Միացյալ Նահանգներում:

Հետագա տարիներին Օսմանյան Թուրքիայում հայության նկատմամբ գործադրված պարբերական ջարդերն ու Մեծ եղեռնը (1894–1896 թթ., 1909 թ., 1915 թ., 1920–1923 թթ.) հայերի ժամանակավոր բնույթ կրող պանդխտությունը վեր են ածել զանգվածային գաղթի՝ ընդգրկելով տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարներից զրկված և հասարակական բոլոր շերտերը ներառող տասնյակ հազարավոր հայերի:

Ք. Ավագյանն առանձին բաժին է հատկացրել Նոր երկրում հայերի տեղաբաշխմանն ու սոցիալ-տնտեսական վիճակին՝ անդրադառնալով նաև ամերիկահայերի զբաղմունքներին, կենսամակարդակին, ընտանեկան կյանքին, կենցաղին ու բարքերին, նոր պայմաններին նրանց ընտելացմանը:

Ամերիկահայ հասարակական-քաղաքական հարաբերությունները լուսաբանելիս հեղինակը մանրամասն ներկայացրել է ամերիկահայ բազմաթիվ ու բազմաբնույթ ակումբների, ընկերությունների, միությունների, կազմակերպությունների, կուսակցությունների հայանպաստ ու ազգապահպան գործունեությունը, ինչպես նաև ամերիկահայերի կապը բնօրրանի հետ:

Աշխատության մեջ մանրամասն տրված է ամերիկահայ հոգևոր-մշակութային կյանքի պատկերը: Հանգամանալից ուսումնասիրության է ենթարկված ամերիկահայ եկեղեցին (առաքելական, ավետարանական և կաթողիկե), որը գնահատելի աշխատանք է ծավալել ազգային ոգին ու նկարագիրը, ավանդույթներն ու սովորույթները, վարքն ու բարքը, հայրենիքի ու ժողովրդի հետ կապն անաղարտ պահելու ուղղությամբ:

Հեղինակն ընդգծում է այն բացառիկ կարևոր գերը, որ կատարել է տեղի հայ մամուլը ԱՄՆ-ի հայության համախմբման ու հայապահպանության գործում: Ինչպես անհատ հայերի, այնպես էլ ազգային կուսակցությունների, տարբեր կազմակերպությունների, միությունների ու ընկերությունների նախաձեռնությամբ հիմնադրված ամերիկահայ մամուլը գոյատևել է գլխավորապես բարերարների և բաժանորդների նյութական ու բարոյական աջակցության շնորհիվ:

Ք. Ավագյանը, անդրադառնալով ԱՄՆ-ի հայ դաղութի կրթական-մասնագիտական զարգացման հարցերին, հետաքրքիր համեմատություններ ու եզրահանգումներ է կատարել, որից ակներև է դառնում այն իրողությունը, որ ԱՄՆ ժամանած ուսյալ հայերն ընդհանուր առմամբ իրենց կրթական մակարդակով, լեզուների իմացությամբ, մտավոր լայն ունակություններով Նոր երկրում զգալիորեն դերազանցել են համանման գաղթական այլ ազգերի ներկայացուցիչներին:

Հեղինակը ներկայացրել է նաև XX դ. սկզբից ամերիկահայ ինքնատիպ մշակութային կյանքի և արվեստի տարբեր ասպարեզների (գրականություն, դերասանական արվեստ, երգարվեստ, կերպարվեստ) ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև նոր միջավայրում շնորհալի արվեստագետների ինքնադրսևորումը:

Աշխատությունը հագեցած է բազմաթիվ համագրական աղյուսակներով: Հատորի վերջում տրված է ծանոթագրություններ հարուստ ցանկ, ինչպես նաև անգլերեն և ռուսերեն ամփոփումներ:

Քնարիկ Ավագյանի «Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.)» աշխատությունը նոր, թարմ խոսք է հայ գաղութների ուսումնասիրության ասպարեզում: Այն հայ պատմագրության մեջ առաջին անգամ ի մի է բերում և ամբողջացնում ԱՄՆ-ի հայ գաղթօջախի սկզբնավորման ու զարգացման բավականաչափ տարողունակ մի ժամանակահատվածի պատմությունը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ